ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

9 սեպտեմբերի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

126
(2792)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿԵՆՏՐՈՆԻ ԹԱՂԱՊԵՏՆ ՈՒ ԹԱՂԱՅԻՆՆԵՐԸ

2019 թվականին վարչապետի աթոռը նոր զբաղեցրած Նիկոլ Փաշինյանը խրոխտ հայտարարեց, որ այլեւս որեւէ մեկը չպետք է թիկնազորով շրջի, հակառակ դեպքում նրանց «կպառկեցնեն ասֆալտին»: Թերեւս Երեւանի Կենտրոնի թաղապետը նման վարքագիծ է դրսեւորում, եւ ոչ մի ցուցադրական ակցիա իրավապահների կողմից չի բեմադրվում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեսախցիկը ֆիքսել էր, թե ինչպես է Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Ղուկասյանը Աբովյան 22 հասցեի բակ մտել (առաջին տպավորությամբ) թիկնապահների ուղեկցությամբ: Երբ մեր լրագրողը մոտեցավ թաղապետին՝ պարզելու, թե ինչու է բակ եկել, նա հայտնեց, թե եկել են աշխատանքները ստուգելու: Այսինքն՝ թաղապետն իր աշխատակիցներով շրջում է բակերում՝ ստուգելու, թե ինչպես են այս կամ այն աշխատանքներն արվել: Իրականում Սամվել Ղուկասյանը, մեղմ ասած, ստեց, քանի որ իր հետ շրջողներից որեւէ մեկը Կենտրոն վարչական շրջանի աշխատակից չէր: Ու հենց իրենք իրենց փողոցային վարքով մատնեցին իրենց ով լինելը: Նախ՝ ագրեսիա ցուցաբերեցին տեսախցիկ տեսնելիս, ապա միայն խաղաղվեցին, երբ իմացան՝ ուղիղ եթեր է: Բոլորը փախան կադրից՝ թաղապետին թողնելով միայնակ:

Հետեւաբար՝ ովքե՞ր էին թաղապետի հետ պտտվող, այսպես ասած, թիկնապահները. Երեւանի կենտրոնի աղմկարար բնակիչներ, որոնց անունները այս կամ այն քրեական գործի կամ սկանդալի շրջանակներում են պտտվել մամուլում:

Եւ այսպես, մուգ վերնազգեստով, ակնոցներով ուղեկից տղան Աշոտ-Արչի Սարդարյանն է: Նա հայտնի գործարար Արմեն Գինոսյանի՝ Մոնարխի Արմենի փեսան է:

Սպիտակ վերնազգեստով ուղեկից պարոնը Նալբանդյան-Վարդանանց խաչմերուկում գտնվող հայտնի «բոքսի դալան»-ի Արմենչիկն է:

Մյուս ուղեկից պարոնը ալավերդյանցի Բոյով մականունով հայտնի մեկն է:

Մյուս երիտասարդները Աշոտ-Արչի Սարդարյանի թիկնապահներն էին, որոնք մշտապես շրջում են Մոնարխի Արմենի փեսայի հետ, սակայն Նիկոլ Փաշինյանը նրանց «ասֆալտին փռելու» հրահանգ չի տալիս: Ինչու՞. որովհետեւ տարբեր թելերով կապված են փեսան ու աները հեղափոխական իշխանիկների հետ:

Թե կոնկրետ ինչ նպատակով են նրանք այս ընտրություններում աշխատում ՔՊ-ի համար, եւ որտեղ են իրենց միջոցներով շտաբներ բացել ՔՊ-ի համար, կներկայացնենք հաջորդիվ:

Հիմա միայն արձանագրենք, որ Կենտրոնի թաղապետ Սամվել Ղուկասյանի համար փողոցային վարքուբարքն է ընդունելի:

Նիկոլ Փաշինյանի մարզային շրջագայություններն իսկական պատուհաս են դառնում տեղի բնակիչների ու մարզային իշխանությունների համար: Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավի մեկնարկին զուգահեռ՝ Փաշինյանը մարզային ակտիվ «շրջագայություններ» է սկսել Կոտայք, իսկ վերջին կանգառը Շիրակի մարզն էր, ուր այցելել էր սեպտեմբերի 6-ին: Փաշինյանը եղել էր Գյումրի, Աշոցք եւ Ախուրյան համայնքներում եւ այնտեղ միջոցառումների մասնակցել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Փաշինյանի այցի օրը իսկական քաոս է եղել Շիրակում: Նրան, բացի ծառայողական կորտեժից, ուղեկցել են մարզի ողջ ոստիկանությունը, ինչպես նաեւ մի ավտոբուս՝ կարմիր բերետավորներով լի: Համայնքային հիմնական փողոցները այդ օրը փակ են եղել, քաղաքացիները չեն կարողացել մի ամբողջ օր տեղաշարժվել, ինչը տեղացիների դժգոհությունն է առաջացրել: Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, Փաշինյանի այցի օրը մարզ են շտապել նաեւ ՔՊ-ական գյումրեցի պատգամավորներ Կարեն Սարուխանյանը եւ Դավիթ Առուշանյանը, որոնք ամբողջ օրը Փաշինյանի կողքից չեն հեռացել ու փորձել են ցույց տալ, որ իրենց հայրենի մարզում մեծ հեղինակություն են վայելում: Ստացվում է՝ Փաշինյանն այցելում է մարզեր՝ տեղի խնդիրներին ծանոթանալու, բայց, հակառակը, ավելի է բարդացնում տեղի բնակիչների առօրյան ու նոր անհարմարություններ ստեղծում նրանց համար:



Սեպտեմբերի 11-ին մեկնարկելու է Ազգային ժողովի նոր նստաշրջանը: Այս նստաշրջանի օրակարգում ընդգրկված է 47 հարց, որոնք մեծամասնությունը կառավարության հեղինակած նախագծերն են եւ հիմնականում նոր են, քննարկվելու են առաջինից երկրորդ ընթերցում ռեժիմով: Իհարկե, հաջորդ շաբաթ կրկին շարունակվելու է Երեւանի ավագանու քարոզարշավը, սակայն ՔՊ խմբակցության պատգամավորներին ասվել է, որ պետք է մասնակցել նիստերի աշխատանքներին: Խոսքը հատկապես չորեքշաբթի օրվա մասին է, երբ վարչապետ Նիկոլ Փաշինյանը պետք է կառավարության անդամների հետ խորհրդարանում լինի եւ պատասխանի պատգամավորների հարցերին: Վերջինիս վաղուց խորհրդարանում չեն տեսել, եւ հաշվի առնելով սահմանային իրավիճակը՝ արդեն պարզ է, թե ինչ հարցեր են հնչելու այդ օրը: Առհասարակ, սպասելի է, որ օրակարգից շեղումներ կլինեն, եւ քննարկումներ կծավալվեն հենց սահմանային իրավիճակի, անվտանգային հարցերի եւ հայկական երկու հանրապետությունների գլխին կախված վտանգների շուրջ: Ընդդիմության հետ բախումները, իհարկե, անխուսափելի կլինեն:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեն հարցաքննության է հրավիրել Կոտայքի մարզի նախկին դատախազ Ռաֆայել Խաչատրյանի որդուն՝ Ալեքսանդր Խաչատրյանին: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ վերջինիս հրավիրել են հարցաքննության 2022թ. ընդդիմության հանրահավաքների ժամանակ ոստիկանության հետ բախման արդյունքում հարուցված քրեական գործի շրջանակներում: Դատախազի որդին առերեսվել է ոստիկանների հետ: Նկատենք, որ այս գործը արդեն 1,5 տարի է, ինչ քննվում է ՀՀ քննչական կոմիտեում, սակայն մինչ օրս որեւէ քննչական գործողություն չէր եղել, եւ հիմա նախաքննական մարմինը կոնկրետ գործողությունների է գնում: Տեսնենք, թե ինչով կավարտվի այս քրեական գործը: Նկատենք, որ դատախազի որդին ի սկզբանե քրեական գործով ճանաչվել է տուժող, իսկ, ահա, քրեական գործը ոստիկանների կողմից հարուցված է անչափահասին խոշտանգելու հատկանիշներով:

ԶՐՈՒՅՑ

ՌԱԶՄԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԸ՝ ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թշնամին զորքեր է կուտակում ՀՀ-ի եւ Արցախի հեռ սահմանին. այս մասին կառավարության վերջին նիստին բաց տեքստով հայտարարեց նաեւ Նիկոլ Փաշինյանը:

Ինչպես փորձագետներն են պնդում, Ադրբեջանի ձեռագիրը նույնն է, ինչ 2020թ-ի սեպտեմբերի 27-ից առաջ:

Ի՞նչ սպասել թշնամու սադրանքներից, ի՞նչ զարգացումներ կլինեն առաջիկայում. այս հարցերի շուրջ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ռազմական փորձագետ Միհեր Հակոբյանի հետ:

-Միանգամից ասեմ, որ մեր պատերազմը չէր կարող ավարտվել ո՛չ 1994, ո՛չ 2016 եւ ո՛չ էլ 2020 թվականներին: Մենք ունեինք պարզապես զինադադար թշնամու հետ, որն ուզում է մեր կործանումը, հայոց պետականության վերացումը եւ հայ ժողովրդի հեռացումը այս տարածաշրջանից: Մենք ամեն րոպե եւ ամեն վայրկյան պետք է ծախսենք ուժեղանալու վրա: Կոնկրետ այս պահին՝ սեպտեմբերի առաջին կեսին պատերազմ կլինի, թե ոչ, շատ դժվար է պատասխանել, որովհետեւ ինձ նման մասնավոր անձնավորությունը չունի ներքին փակ, գաղտնի ինֆորմացիա, եւ ստիպված ենք հետեւություններ անել ընդհանուր աղբյուրներից ստացված տեղեկությամբ այնքանով միայն, որ մի փոքր գիտենք պատմություն, զբաղվում ենք քաղաքականությամբ եւ այլն: Այդուհանդերձ, կարող եմ ասել, որ կան որոշ հանգամանքներ, որոնք էական ազդեցություն են ունեցել այն հանգամանքի վրա, որ լայնամասշտաբ պատերազմ, այդուամենայնիվ, չի լինի: Այս առումով ամենից առաջ կկարեւորեի ԱՄՆ ակտիվ դիրքորոշումը: Պատահական չէ, որ սեպտեմբերի 1-ին տեղի է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի եւ Ալիեւի հեռախոսազրույցը, որից հետո կամ որի ընթացքում վերջին էսկալացիան Սոթքում հանգեց: Անցած տարի էլ, էսկալացիան երբ որ եղավ, նոր զսպիչ ազդեցություններ եղան: Այս առումով պետք է առանձնացնել եվրոպական կողմի դիրքորոշումները, հատկապես՝ Ֆրանսիայի: Վերջերս Գերմանիան եւս ակտիվացավ այս ոլորտում: Մի խոսքով, Եվրոպական միության մոտեցումն այն է, որ չպետք է թույլ տալ էսկալացիա: Միաժամանակ Թուրքիայի վիճակն էլ միանշանակորեն լավ չէ, եւ Էրդողանը, այսպես ասած, «այն Էրդողանը չէ», որ 2020 թվականին էր. բազմաթիվ խնդիրներ նրան փոխել են: Այս առումով կարող ենք մեզ թույլ տալ զգուշորեն ու լավատեսորեն... Գոնե լայնամասշտաբ էսկալացիայի հավանականությունը որոշակիորեն ցածր է:

Ինչ վերաբերում է կուտակումներին, ճիշտ է, այն ինքնին պատերազմի նախանշում է իրենից ենթադրում, սակայն բազմաթիվ օրինակներ կան, որ կուտակումներ լինում են, բայց չի լինում պատերազմ: Մենք երկու տարբերակն էլ պետք է հաշվի առնենք: Երբ ասում ենք, որ եղավ կուտակում, ապա՝ պատերազմ, պետք է հիշել հազարավոր դեպքերի մասին, երբ եղավ կուտակում, բայց չեղավ պատերազմ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ⇨ ԳՈՎՔ

Սեպտեմբերին՝ նոր ուսամնական տարվա սկզբին, դպրոցականներին, նրանց ծնողներին եւ ուսուցիչներին սպասվում էր տհաճ անակնկալ. դասագրքեր չկան:

Ըստ նախարարության՝ մրցույթում, որը հայտարարվել էր անցած տարի, բավարար քանակի մասնակից չի եղել:

Սեպտեմբերից օրեր անց դպրոցներում բաժանվեցին մի քանի դասագրքեր, որոնք ունեն խայտառակ բովանդակություն, որի մասին նախկինում գրել էինք: Մաթեմատիկայի դասագրքերում՝ խնդիրների կողքին, QR-ը սկսան անելու դեպքում հայտնվում է խնդրի լուծումը, որի մասին բողոքում էին ծնողները:

Այս մյուս դեպքում էլ պատմության գրքերի անվանումները փոխվել են՝դառնալով «Իմ հայրենքը»: Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների՝ հանվել է «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան: Այն միացվել է «Իմ հայրենք» առարկային:

Պատմության գրքերում ավելացվել են «թավշյա հեղափոխության» մասին մանրամասներ, հատուկ հատվածներ է հատկացվել թավշյա հեղափոխության «դեմքերին»: Այսինքն՝ իշխանությունները փոխում են դասագրքերը, փոխում պատմության գրքերի բովանդակությունը, նաեւ խնդրահարույց համարում նախկին գրքերի բովանդակությունը, իսկ այս դասագրքերում գովում եւ փառաբանում են իրենց «վաստակը»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



ՀԱՋԻԵՎԸ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒՄ Է

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ադրբեջանի զինված ուժերը պլանային վարժանքներ են անցկացնում աշուն-ձմեռ սեզոնին նախապատրաստվելու համար:

Այս տեղեկությունը հաստատել է Ադրբեջանի նախագահի օգնական-նախագահի աշխատակազմի արտաքին քաղաքականության բաժնի ղեկավար Հիքմեթ Հաջիեւը:

«Սա կանոնավոր պլանավորման գործընթացի մի մասն է»,- հավելել է նա՝ Հայաստանին մեղադրելով սահմանին զորքեր կուտակելու եւ նոր սպառազինությունների համակարգեր ձեռք բերելու համար:

Նրա խոսքով՝ Ղարաբաղում գտնվող հայկական ուժերը նույնպես դուրս են եկել իրենց զորանոցներից եւ բարձր պատրաստվածության վիճակում տեղակայվել առաջնագծում:

«Մեր ռազմավարությունն է ճնշել եւ չեզոքացնել Ադրբեջանի դեմ ցանկացած զինված կամ անօրինական ռազմական գործողություն կամ սադրանք»,- հավելել է Ադրբեջանի նախագահի օգնականը:

ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Արարատի մարզպետ Սեդրակ Թեւոնյանը պաշտոնի նշանակվել է 2022 թվականի հունվարի 13-ին: Թեւոնյանը եւս այն անձանցից է, որը քաղաքական դաշտ է եկել 2018 թվականի թավշյա հեղափոխությունից հետո: Մինչ այդ նա 7 տարի զբաղվել է անհատ ձեռներեցությամբ, սակայն 2018 թվականից հետո «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր դարձավ Ազգային ժողովում:

Ըստ 2022 թվականի հայտարարատու տարվա՝ մարզպետը հայտարարագրել է համատեղ սեփականությամբ մեկ հողամաս՝ ձեռք բերված 1991 թվականին, եւ մեկ անհատական բնակելի տուն՝ձեռք բերված 2010 թվականին. երկու գույքերն էլ գտնվում են Արարատի մարզի Արալեզ գյուղում:

2022 թվականին Թեւոնյանը Երեւանի Արաբկիր վարչական շրջանում բնակարան է նվիրատվություն ստացել Ռուզաննա Ստեփանյանից:

2019 թվականին մարզպետը գնել է մեքենա՝ նույն տարվա արտադրության, Toyota մակնիշի:

Մարզպետի կանխիկ դրամական միջոցները կազմել են 8 մլն 400 հազար դրամ: Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 11 մլն 843 հազար դրամ, որից 11 մլն 52 հազարը ՀՀ Արարատի մարզպետարանից է՝ որպես աշխատանքի վարձատրություն, իսկ 791 հազարը՝ ՀՀ ԱԺ աշխատակազմից՝ աշխատանքի վարձատրություն:

Մարզպետի կնոջ՝Նանե Մարտիրոսյանի հայտարարագրում եւս ներկայացված է Արաբկիր վարչական շրջանում նվիրատվություն ստացած բնակարանը: Կնոջ կանխիկ դրամական միջոցները կազմել են 2 մլն: Նրա հաշվետու տարվա եկամուտները կազմել են 5 մլն 346 հազար դրամ, որից 2 մլն 106 հազարը աշխատանքի վարձատրություն է Արարատի բժշկական կենտրոնից, որտեղ Մարտիրոսյանն աշխատում է որպես բժիշկ-ճառագայթաբան: Եկամտի մյուս մասը՝ 3 մլն 240 հազարը, վարձակալության դիմաց ստացված վճար է, գործարքի մյուս կողմը Արարատի բժշկական քոլեջն է:

Ռազմիկ Թեւոնյանը՝մարզպետի հայրը, հաշվետու տարվա ընթացքում ստացել է 56 մլն 509 հազար դրամ տարեկան եկամուտ: Որպես աշխատանքի վարձատրություն՝նա ստացել է 1 մլն 364 հազար դրամ Երասխի գինու գործարանից, 1 մլն 144 հազար՝ՀՀ Արարատի մարզպետարանից, եւ 54 մլն դրամ՝ շուկայից, ըստ երեւույթին, գյուղատնտեսությամբ զբաղվելու արդյունքում, քանի որ մարզպետի հայրը կարծես սեփականաշնորհել է Արարատի Արալեզ համայնքի բոլոր մշակելի ցանքատարածությունները: Նա հայտարարագրել է 17 անշարժ գույք, այդ թվում՝8 միանձնյա սեփականությամբ հողամաս, 6 միանձնյա սեփականությամբ բազմամյա տնկի, 2 համատեղ սեփականությամբ անհատական բնակելի տուն, 1 արտադրական նշանակության շինություն՝միանձնյա սեփականությամբ:

Հողամասերը ձեռք են բերված տարբեր ժամանակահատվածներում, հիմնականում՝ երբ հայրն էր մարզպետ կամ որդին:

Ռազմիկ Թեւոնյանի հանձնված եւ վերադարձված փոխառությունները կազմել են 707 մլն դրամ, բանկային հաշիվների մնացորդները՝ 238 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝65 մլն դրամ:

Մարզպետի հետ համատեղ բնակվող Ռուզան Մարգարյանը՝ մայրը, հայտարարագրել է Ռազմիկ Թեւոնյանի հետ համատեղ սեփականությամբ 1 հողամաս եւ անհատական բնակելի 1 տուն, 1 միանձնյա սեփականությամբ հողամաս: Նրա կանխիկ դրամական միջոցները կազմել են 2 մլն 500 հազար դրամ, հաշվետու տարվա եկամուտները կազմել են 947 հազար դրամ, որը աշխատանքի վարձատրություն է «Արփի» գինու գործարանից: Ըստ Սեդրակ Թեւոնյանի հայտարարագրի՝ Մարգարյանը «Գինեթաս» ՍՊԸ-ի տնօրեն է: Քերոբ Թեւոնյանը՝մարզպետի եղբայրը, հայտարարագրել է 2 հողամաս եւ հասարակական նշանակության մեկ շինություն: Նա հայտարարագրել է 2020 թվականին ձեռք բերված՝ 2017 թվականի արտադրության, Hyundai մակնիշի մեքենա:

Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 72 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝20 մլն դրամ: Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 15 մլն 371 հազար դրամ, որից 371 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է «Երասխի գինու գործարան» ՍՊԸ-ից, որտեղ աշխատում է որպես ապրանքագետ: 15 միլիոն դրամը վարկ է «Ակբա բանկ» ԲԲԸ-ից:

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՆՄՈՒՇԸ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) հաստատել է Երեւանի ավագանու ընտրությունների քվեաթերթիկների նմուշը: «Ժողովուրդ» օրաթերթին այս մասին տեղեկացնում են ԿԸՀ մամուլի ծառայությունից:

Նշենք, որ ԿԸՀ-ն հաստատել է նաեւ մինչ այժմ ներկայացված թեկնածուների ինքնաբացարկների դիմումները: Ինքնաբացարկի դիմումներ են ներկայացրել «Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինքի համամասնական ցուցակի ներկայացուցիչ Աբգար Ալբաբյանը եւ «Ուժը հայրենյաց» կուսակցության համամասնական ցուցակի ներկայացուցիչ Հովհաննես Զաքարյանը: Հովհաննես Զաքարյանի դիմումը սահմանված կարգով նոտարական վավերացմամբ է եղել, հետեւաբար վերջինիս ներկայությունը նիստին պարտադիր չի եղել, իսկ Աբգար Ալբաբյանը նիստին մասնակցել է եւ հանձնաժողովին է ներկայացրել անձը հաստատող փաստաթուղթ:

Հավելենք, որ, Ընտրական օրենսգրքով սահմանած ժամանակացույցի համաձայն, սեպտեմբերի 7-ին՝ 18:00-ին, ավարտվել է կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի, ինչպես նաեւ ավագանու անդամի թեկնածու հանդիսացող անձանց ինքնաբացարկի դիմում ներկայացնելու ժամանակը, հետեւաբար ԿԸՀ-ն չի կարող այլեւս ինքնաբացարկի դիմումներ ընդունել:

ԿԸՀ-ն հաստատել է նաեւ ավագանու ընտրություններին մասնակցած ընտրողների ցուցակները սկանավորելու որոշումը:

Նշենք նաեւ, որ, մեկ այլ որոշմամբ, հանձնաժողովը հաստատել է Երեւանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական հարթակ կազմակերպությանը հրավիրելու որոշումը:

ԻՐԱՎԻՃԱԿԸ ԼԱՐՎԵԼ Է

«Ժողովուրդ» օրաթերթը Արցախի ԱԱԾ-ի կողմից տարածած հաղորդագրությունից տեղեկանում, որ, նախագահի ընտրություններով պայմանավորված, հանրապետությունում ստեղծվել է ներքաղաքական լարված իրադրություն:

Մասնավորապես, հայտարարությունում ասվում է, որ միաժամանակ տարբեր քաղաքական ուժեր, իրավիճակից օգտվելով, հավաքների եւ ցույցերի անցկացման կոչեր են անում՝ այդկերպ փորձելով ապակայունացնել իրավիճակը:

«Երկիրը ցնցումների տանելու հայտարարություններ անող քաղաքական ուժերի ներկայացուցիչներին ու առանձին անձանց կոչ ենք անում սթափվել եւ Արցախի Հանրապետության համար այս վճռորոշ ու օրհասական պահին վտանգի տակ չդնել մեր պետականությունը»,- ասվում է հայտարարությունում:

ԱՐՑԱԽ

ԻՇԽԱՆՅԱՆԸ՝ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Արցախի Հանրապետության նախագահի պաշտոնակատար Դավիթ Իշխանյանը հանդես է եկել Արցախի ժողովրդին ուղղված կոչով:

Կոչում ասվում է, որ սեպտեմբերի 9-ին, Արցախի Հանրապետության Սահմանադրության համաձայն, Ազգային ժողովն ընտրելու է Հանրապետության նախագահ:

«Ստեղծված ոչ սովորական իրավիճակում այս քայլին ենք գնում ամեն օր ավելացող մարտահրավերներին արագ արձագանքելու, երկրի ներքին կյանքն արդյունավետորեն կազմակերպելու եւ արտաքին մարտահրավերներին հավուր պատշաճի դիմագրավելու նպատակով»,-ասել է Իշխանյանը:

Իշխանյանի խոսքով՝ երկրի ղեկավար ընտրելու իրավունքն ու պարտականությունը Սահմանադրությամբ դրված է ժողովրդի կողմից ընտրված խորհրդարանի վրա: Բացառապես Արցախի Ազգային ժողովի խմբակցություններին է վերապահված հանրապետության նախագահի թեկնածու առաջադրելու լիազորությունը, ինչն էլ իրականացվել է սահմանված կարգով:

«Առ այսօր հանրապետության նախագահի հրաժարականի եւ նոր նախագահի ընտրության համար նախապատրաստական բոլոր գործընթացները կազմակերպվել են Սահմանադրությանն ու օրենսդրությանը համապատասխան՝ հաշվի առնելով առկա սուր ճգնաժամային իրավիճակը»:

Նկատի ունենալով վերջին օրերին հանրային տրամադրություններում զարգացող որոշակի վտանգավոր միտումները՝ այս պատասխանատու պահին Դավիթ Իշխանյանն իրեն վերապահված իրավունքով սթափության կոչ է անում բոլորին ու հորդորում չտրվել ժողովրդին պառակտող սադրանքներին, չենթարկվել նեղ խմբային շահերին եւ, հանուն ընդհանուր շահի, մի կողմ թողնել անձնական նախապատվությունները:

«Ոչ ոք իրավունք չունի մեր հանրությանը, նրա առանձին խմբերի տանել արկածախնդրության մեզ համար ճակատագրական այս ժամանակահատվածում: Ուզում եմ հատուկ ընդգծել եւ վստահեցնել ձեզ, որ ներքին կայունությունը խաթարող բոլոր գործողությունները կկասեցվեն օրենքի ուժով»,- հավելել է Իշխանյանը:

Արցախի Հանրապետության նախագահի պաշտոնակատարի խոսքով՝ մենք ունենք բոլոր հնարավորությունները՝ ի չիք դարձնելու Արցախի Հանրապետության պետական ինստիտուտները կազմալուծելու Ադրբեջանի ցանկությունը, եւ որեւէ գործողությամբ չպետք է նպաստենք ադրբեջանական հանցավոր նպատակների իրագործմանը:

«Մենք հանձնառու ենք պաշտպանելու եւ ամրապնդելու երեք տասնամյակ կերտած պետականության հիմքերը: Դա մեր ժողովրդի ցանկությունն է, կամքը, եւ մենք պարտավոր ենք առաջնորդվել այդ պատգամներով:

Հաջողություն եմ մաղթում բոլորիս այս հույժ կարեւոր քաղաքական գործընթացն իրականացնելու ճանապարհին:

Հավատացած եղեք՝ միասին անհնարը հնարավոր կդարձնենք»,- եզրափակել է նա:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԴԱԴԱՐԵՑՎԻ

«Ժողովուրդ» օրաթերթին «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը տեղեկացնում է, որ Մ-3, ՀՀ սահման - Մարգարա - Վանաձոր - Տաշիր - ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Պուշկինի լեռնանցքի թունելի նորոգման համար կատարվող ուսումնասիրությունների նպատակով սեպտեմբերի 11-ից մինչեւ 15-ը՝ ժամը 9:00-ից 13:00-ն եւ 14:00-ից 18:00-ն, Պուշկինի թունելով երթեւեկությունը կդադարեցվի:

ԱՐՑԱԽԻՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆ

Սեպտեմբերի 8-ին Արցախի առողջապահության նախարարության «Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից 10 բուժառու ուղեկցողների հետ միասին անհետաձգելի մասնագիտացված բժշկական օգնություն ստանալու համար Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ տեղափոխվել է ՀՀ մասնագիտացված բժշկական կենտրոններ:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են Արցախի առողջապահության նախարարությունից:

«Արեւիկ» բուժմիավորումում այս պահին ստացիոնար բուժում է ստանում 24 երեխա, 5-ը գտնվում է նորածնային եւ վերակենդանացման բաժանմունքում:

«Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ստացիոնար բուժում է ստանում 92 հիվանդ, 6 բուժառու գտնվում է վերակենդանացման բաժանմունքում, որից՝ 3-ը ծայրահեղ ծանր վիճակում:

ԸՆԴՈՒՆԵԼ Է ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ԱՄԷ-ի նախագահ Մոհամմեդ բին Զայեդ Ալ Նահյանն ընդունել է պաշտոնական այցով Աբու Դաբիում գտնվող Արարատ Միրզոյանին:

ԱՄԷ նախագահը եւ ՀՀ ԱԳ նախարարն անդրադարձ են կատարել տարբեր բնագավառներում փոխշահավետ համագործակցության զարգացման հնարավորություններին, մտքեր փոխանակել նոր հեռանկարային ուղղություններով համատեղ ծրագրերի կյանքի կոչման շուրջ:

ՀՀ ԱԳՆ-ից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ երկուստեք գոհունակություն է արտահայտվել երկու երկրների միջեւ առեւտրատնտեսական կապերի աշխուժացման կապակցությամբ՝ ընդգծելով Հայաստանի եւ ԱՄԷ միջեւ առկա զգալի ներուժն առավել արդյունավետ օգտագործելու անհրաժեշտությունը:

Նախարար Միրզոյանն ընդգծել է, որ Հայաստանում էմիրաթական ընկերությունների համար ստեղծված է անհրաժեշտ բարենպաստ գործարար միջավայր:

Հավելենք, որ անդրադառնալով Հարավային Կովկասում առկա անվտանգային իրավիճակին՝ Արարատ Միրզոյանը նշել է, որ Ադրբեջանն իր առավելապաշտական նկրտումներով եւ ագրեսիվ գործողություններով խոչընդոտում է տարածաշրջանում տեւական խաղաղություն հաստատելու ջանքերին:

ՄԱՆՐԱՄԱՍՆ

ԻՆՉՈ՞Ւ ՉԵՐԲԱԿԱԼԵՑԻՆ ԳԱԼԵՅԱՆԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ 44-օրյա պատերազմի հերոս Մխիթար Գալեյանի հորը՝ Գարիկ Գալեյանին, ձերբակալել են թմրանյութի իրական գործի շրջանակներում: Եվ, ահա, ՀՀ ֆինչական կոմիտեն այս գործից նոր մանրամասներ է հայտնում. «2023թ. սեպտեմբերի 6-ին՝ ժամը՝ 19:30-ին, թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու, պահելու եւ իրացնելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով՝ Երեւան քաղաքի Վարդանանց փողոցից ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ ԹԱՇԴՊ վարչության ծառայողների կողմից ձերբակալվել է Գարիկ Գալեյանը: Վերջինս իր կողմից վարած «Տոյոտա Քեմրի» մակնիշի ավտոմեքենայով տեղափոխվել է ոստիկանության բաժին:

Գ. Գալեյանի անձնական խուզարկությամբ վերջինիս մոտ հայտնաբերվել եւ վերցվել է պոլիէթիլենային տոպրակ, որի մեջ առկա է եղել 3 միանման պոլիէթիլենային փաթեթ՝ համապատասխանաբար 1.59 գրամ, 1.51 գրամ եւ 1.60 գրամ ընդհանուր քաշերով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի նմանվող յուրահատուկ հոտով դեղնականաչավուն զանգվածներով: Ոստիկանության փորձագիտական կենտրոնից ստացված եզրակացության համաձայն՝ նրա մոտ հայտնաբերված նյութը հանդիսանում է «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց:

Նույն օրը, ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, նախաձեռնվել է քրեական վարույթ, որը միացվել է ավելի վաղ Գ. Գալեյանի առնչությամբ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով եւ 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախաձեռնված քրեական վարույթին:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից սեպտեմբերի 6-ին կայացվել է Գ. Գալեյանին ձերբակալելու մասին որոշում:

Ավելի վաղ ՀՀ քննչական կոմիտեն տեղեկացրել է, որ 2022թ. հունիսի 30-ին՝ ժամը 13:50-ի սահմաններում, Երեւան քաղաքի Վ. Սարգսյան փողոցում՝ ՀՀ գլխավոր դատախազության դիմաց զոհված զինծառայողների ծնողների կողմից իրականացվող ակցիայի ժամանակ Երեւանի 48-ամյա բնակիչ Գ.Գալեյանը, եղբոր եւ մի խումբ անձանց հետ, հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու ուղղակի դիտավորությամբ, հասարակության նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելով, օգտագործելով այն առիթը, որ վավերագրական ֆիլմի նկարահանումների իրականացման նպատակով ՀՀ գլխավոր դատախազության շենքի դիմաց գտնվող Դ.Ս.-ն չի կատարում նկարահանումները դադարեցնելու իր պահանջները, նրան ցուցարարների, լրագրողների, ոստիկանների մոտ ստորացնելու նպատակով իր ձեռքում գտնվող շշի պարունակությունը ցուցադրաբար լցրել է վերջինիս գլխին: Այնուհետեւ, իր եղբոր եւ մի շարք անձանց հետ հայհոյանքներ եւ այլ անպարկեշտ արտահայտություններ հնչեցնելով, հարձակվել են Դ. Ս.-ի վրա, պատռել նրա վերնաշապիկը, բազմաթիվ հարվածներ հասցրել վերջինիս մարմնի տարբեր մասերին:

Նշված հանցավոր արարքները կատարելու համար Գ. Գալեյանին մեղադրանք էր ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով եւ 195-րդ հոդվածի 1-ին մասով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց էր ընտրվել բացակայելու արգելքը:

Միացված վարույթով կատարված նախաքննությամբ ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝ 2023թ. սեպտեմբերի 8-ին Գ. Գալեյանին նոր մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով եւ 393-րդ հոդվածի 1-ին մասով:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից միջնորդություն է ներկայացվել դատարան՝նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ՝հաշվի առնելով նաեւ այն հանգամանքը, որ նա խախտել է ազատության մեջ մնալու պայմանը:

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում նախաքննությունը շարունակվում է»:

ՌՈՒՇԱԳՐԱՎ

«ՎԱԼԵՐՅԱՆԿԱ»-Ն ՈՒ ՊԱՐՏՔԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ սեպտեմբերի 7-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղի՝ 1999 թվականի ծնված տղամարդը ինքնասպանության նպատակով խմել է 20 հատ «վալերյանա» տեսակի դեղահաբ, որից հետո ինքնազգացողությունը վատացել է: Նրան տեղափոխել են Արմավիր բժշկական կենտրոն: Ըստ նախնական տեղեկությունների՝ նրա այդ քայլի պատճառը շատ պարտքեր ունենալն է:

ԳՈՂՈՆԸ ՀԱՅՏԱԲԵՐՎԵՑ

Սեպտեմբերի 7-ին ոստիկանության Հրազդանի բաժնում ստացվել են օպերատիվ տեղեկություններ, որ Արմավիրի մարզի Մյասնիկյան գյուղի բնակիչ, 33 եւ 23 տարեկան եղբայրները Հրազդանի Միկրոշրջան թաղամասում՝ մի ավտոտնակի մոտից, գաղտնի հափշտակել են մետաղյա ճաղավանդակներ, խողովակներ եւ այլ իրեր: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում ձեռք են բերվել փաստական տվյալներ, որ գիշերվա ժամը երեքի կողմերը նրանք գողոնը բարձել են «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի մեքենան: Ժամը 8.20-ին եղբայրներն ու «Ֆորդ Տրանզիտը» հայտնաբերվել են մոտակայքում: Հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածանքով՝ եղբայրները ձերբակալվել ու տեղափոխվել են բաժին, իսկ մեքենան տեղափոխվել է պահպանվող հատուկ տարածք: Փաստաթղթերը ներկայացվել են Կոտայքի մարզային քննչական վարչություն: Հանգամանքները պարզվում են:

ԲԵՐՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՀՈԲԵԼՅԱՐԸ

Սեպտեմբերի 7-ին կրակոցներ են հնչել Երեւանում: Ժամը 22:50-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Մալաթիայի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Հրազդանի կիրճում գործող «8-րդ հրաշալիք» ռեստորանային համալիրի տարածքում կրակոցներ են հնչել:

Ինչպես հայտնում է shamshyan.com-ը, դեպքի վայրում ոստիկաններն ու քննիչները հայտնաբերել են կրակված 1 պարկուճ եւ 1 փամփուշտ:

Իրավապահները պարզել են, որ Երեւանի բնակիչ, 33-ամյա Արթուր Հ.-ն իր ծննդյան օրը «8-րդ հրաշալիք» ռեստորանում նշելու ժամանակ իր մոտ եղած ատրճանակից կրակոցներ է արձակել: Պարեկները հայտնաբերել են Արթուր Հ.-ին եւ տեղափոխել ոստիկանության Մալաթիայի բաժին. նրա մոտ հայտնաբերվել է ատրճանակ՝ առանց փամփուշտների:

Կայքի փոխանցմամբ՝կրակողը եղել է իր ընկերների հետ եւ կրակոցներ արձակելուց հետո իր ծննդյան առթիվ «գողական» խորհրդանիշով թխված տորթը չի հասցրել համտեսել:

Վերջինս ներկայացվել է Մալաթիայի քննչական բաժին, որտեղ դեպքի փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ:

ԲԱՑԱՌԻԿ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել տրանսգենդեր անձին կյանքից զրկելու գործով: Մասնավորապես՝ մեզ հայտնի է դարձել, թե Քննչական կոմիտեում ինչ ցուցմունք է տվել 28-ամյա տրանսգենդեր անձին կյանքից զրկելու գործով կալանավորված, Արմավիրի մարզի 28-ամյա բնակիչը:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ նա իրավապահներին պատմել է, որ ինքն է կյանքից զրկել 28-ամյա տրանսգենդերին, եւ մանրամասն ներկայացրել է, թե ինչպես է տեղի ունեցել դեպքը: Ըստ երիտասարդ տղայի՝ 20-ամյա տրանսգենդերն իրեն պարտք է եղել 400 հազար դրամ, ու պարտքը վերցնելու համար գնացել է նրա տուն: Վերջինս դուռը բացել է ու դանակով փորձել է հարվածել իրեն, ինքն էլ տրանսգենդեր անձի ձեռքից վերցրել է դանակը ու մի քանի հարված հասցրել նրան: Քննիչի այն հարցին՝ ինչու է այրել տունը, երիտասարդ տղան պատասխանել է, որ որեւէ բան չի հիշում, թե տան այրելը ինչպես է եղել:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր 28-ամյա տրանսգենդեր անձին կյանքից զրկելու դրդապատճառը: Գրել էինք, որ քննությամբ պարզվել է, որ 28-ամյա տրանսգենդերը սպանության գործով ձերբակալված տղային պարտք է եղել, ու նրանց միջեւ պարտք ու պահանջի խոսակցություն է եղել: Ավելին՝ քննությամբ պարզվել է, որ սպանվածն ու ձերբակալվածը «Կրիստալ» թմրանյութի ձեռք բերման ու իրացման գործընթացի մեջ են եղել:

Հիշեցնենք, որ օգոստոսի 20-ին՝ ժամը 17.04-ին, 911 ծառայությունից ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն հաղորդում էր ստացվել, որ Կողբացու փողոցի շենքերից մեկի մի բնակարանում հրդեհ է: Նշված հասցե մեկնած ՆԳՆ փրկարար ծառայության աշխատակիցները հրդեհաշիջման աշխատանքներ կատարելուց հետո հայտնաբերել էին դիակ: Նշված հասցե օպերատիվ-քննչական խումբ էր մեկնել: Դիակի վրա կտրած-ծակած վնասվածքներ էին հայտնաբերվել: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ պարզվել էր դիակի ինքնությունը՝Արմավիրի մարզի 28-ամյա բնակիչ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝սեպտեմբերի 7-ից 8-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 64 դեպք, որոնցից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆ՝ ԲԿ-ԻՑ

Իջեւանի բժշկական կենտրոնում բուժվող հիվանդները դժգոհում են, որ մեծ հիվանդանոցում հիվանդների համար լողանալու հնարավորություն չկա, ինչը մեծ անհարմարություններ է առաջացնում այդտեղ երկար ժամանակով բուժվողների համար: Իջեւանի ԲԿ-ի հիվանդասենյակների պատերից կախված են հեռուստացույցի տակդիրներ, սակայն ոչ մի հիվանդասենյակում հեռուստացույց չկա, որ հիվանդները, հեռուստացույց նայելով, շեղվեն իրենց առողջական վիճակից: Հիվանդասենյակներում օդափոխիչներ չկան, հիվանդները խեղդվում են շոգից, ծանր օդից: Իջեւանի բնակիչ Տաթեւ Թամրազյանը դժգոհում է այդ ԲԿ-ի զուգարաններում տիրող ծանր հոտից, նաեւ ԲԿ-ի բուժաշխատողների աշխատանքից, երբ երկու տարեկան երեխայի համար գիշերը շտապ օգնություն է կանչել, գիշերվա ժամը 2-ին ԲԿ-ից ասել են՝ երեխային տաքսիով բերե՛ք, հիվանդանոցում էլ հերթապահ մանկաբույժը բացակայել է: Իջեւանի ԲԿ-ն հիմնանորոգելու համար մեծ փողեր են ծախսվել: 2010թ. ապրիլի 9-ին Սերժ Սարգսյանի մասնակցությամբ տեղի ունեցավ Իջեւանի բժշկական կենտրոնի հիմնանորոգված շենքերի բացման արարողությունը: ԲԿ-ի շենքը վերանորոգվել է կառավարության եւ Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ ՀՀ նախագահի՝ մարզերի համաչափ զարգացման ծրագրի շրջանակում, աշխատանքների վրա ծախսվել է ավելի քան 2 մլն ԱՄՆ դոլար: 2023թ. ապրիլի 29-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանն այցելել է Իջեւանի ԲԿ, որտեղ հիմնվել են համակարգչային տոմոգրաֆիայի եւ հեմոդիալիզի բաժանմունքներ, այդ նպատակով ծախսվել է 223 միլիոն դրամ:

ՄԱՐԶՊԵՏԸ ԼՌՈՒՄ Է

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկատվական հարցում է ուղարկել՝հետաքրքրվելով, թե Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում քանի ուսուցիչ եւ ուսուցչի օգնական է աշխատում, այդ դպրոցներում ընդհանուր թվով ուսուցչի քանի թափուր հաստիք կա, որ առարկաների ուսուցիչների հաստիքներն են դրանք: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում աշխատում է 1577 ուսուցիչ եւ 161 ուսուցչի օգնական: Ուսուցչի թափուր հաստիքների վերաբերյալ հայտարարությունները տեղադրվում են կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ Տավուշի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքերում, ինչպես նաեւ հրապարակվում է «Կրթություն» շաբաթաթերթում»:

Մարզպետը չի հայտնել, թե մարզպետարանի ենթակայությամբ գործող՝ Տավուշի հանրակրթական դպրոցներում ուսուցչի քանի թափուր հաստիք կա, որ առարկաների գծով: Մարզի գյուղական դպրոցներում ուսուցիչների տասնյակ թափուր հաստիքներ կան, Տավուշի դպրոցներում միջին մասնագիտական կրթությամբ 133 ուսուցիչ կար, որոնցից 65-ն արդեն ազատվել է աշխատանքից, 68-ը դիմել է կամավոր ատեստավորման համար: Սեպտեմբերի 23-ից հոկտեմբերի 8-ը կայանալիք ատեստավորումից նվազագույնը 60 տոկոս արդյունք չունեցած ուսուցիչները կազատվեն աշխատանքից:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆ ՈՒ ՆՈՐ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունից «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացնում են, որ նախարարին կից աշակերտական խորհրդի հերթական նիստում քննարկվել են նոր ուսումնական տարում կրթական համակարգում ներդրված հիմնարար փոփոխությունների եւ ոլորտի բարելավմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ մի շարք հարցեր:

Նիստը վարել է նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը: Խորհրդում ներգրավված է ՀՀ մարզերի եւ Երեւանի հիմնական, միջնակարգ եւ ավագ դպրոցների բարձր դասարանների 22 աշակերտ:

Նշենք, որ նախարարի տեղակալը խորհրդի անդամներին տեղեկացրել է, որ այս տարի հանրակրթական դպրոցների 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարաններում ներդրվել է հանրակրթության նոր պետական չափորոշիչը, որը հիմնված է կարողունակությունների զարգացման վրա՝ ամեն կրթական աստիճանի համար սահմանելով հստակ վերջնարդյունքներ: Նա նաեւ ավելացրել է, որ չափորոշչով նախատեսվում է բարձրացնել դպրոցների մանկավարժական ինքնավարությունը, իսկ ուսումնական գործընթացը դարձնել առավել արդյունավետ՝ հրաժարվելով անբավարար գնահատման շեմից եւ կրտսեր դպրոցում միավորային գնահատումը փոխարինելով ոչ միավորային եւ ձեւավորող գնահատմամբ, վերանայելով ուսումնական պլանները:

Աշակերտական խորհրդի անդամները մի շարք հարցեր են ուղղել Արաքսիա Սվաջյանին, որոնք, մասնավորապես, վերաբերել են 12-ամյա կրթության առավելություններին ու թերություններին, մասնագիտական կողմնորոշմանը, օլիմպիադաների կազմակերպմանը, հավասար պայմանների սահմանմանը, կրեդիտային համակարգի ներդրմանը, բուհական ընդունելության կարգին, «Ֆիզիկական կուլտուրա» եւ ՆԶՊ առարկաների դասավանդման արդյունավետությանը, դպրոցների մարզադահլիճների վերանորոգմանն ու վերակառուցմանը եւ այլն: Նախարարի տեղակալն անդրադարձել է բարձրացված բոլոր հարցերին եւ խնդիրներին՝ շեշտելով, որ դրանց մի մասի պատասխաններն ու լուծումները տրվում են դպրոցներում նոր չափորոշչի ներդրմամբ:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացնում է, որ հանրակրթության ոլորտի նորություններից փոխնախարարն առանձնացրել է նաեւ մարզառազմական ճամբարի ծրագիրը, որի ընթացքում 11-րդ դասարանցիները գործնական գիտելիքներ եւ հմտություններ են ստանում «Նախնական զինվորական պատրաստականություն» առարկայից: Հանրակրթության նոր չափորոշչով՝ մարզառազմական ճամբարը պարտադիր է լինելու՝ իբրեւ այս առարկայի գործնական բաղադրիչ:

Նշենք նաեւ, որ հանդիպմանը կարեւորվել է տարաբնույթ միջոցառումների կազմակերպումը, որոնք միտված են օգնելու աշակերտներին մասնագիտական կողմնորոշման, նոր հմտությունների եւ կարողությունների ձեռք բերման եւ այլ հարցերում:

ՋՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԵՆՍԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ԱՄՆ բանակի Եվրոպայի եւ Աֆրիկայի հրամանատարությունն անդրադարձել է ՀՀ-ում նախատեսված հայ-ամերիկյան համատեղ զորավարժությանը:

«Մոտ 85 ամերիկացի եւ 175 հայ զինվորներ սեպտեմբերի 11-20-ը Հայաստանում կմասնակցեն «Արծիվ գործընկեր» խաղաղապահ զորավարժություններին:

Ամերիկյան 1-ին բրիգադի, 101-րդ օդադեսանտային դիվիզիայի եւ Կանզասի ազգային գվարդիայի զինծառայողներն ու Հայաստանի 12-րդ խաղաղապահ բրիգադի զինվորներն ուսումնավարժությունները կանցկացնեն Երեւանի մերձակայքում գտնվող Զառ եւ Արմավիր ուսումնական տարածքներում»,- նշված է հրամանատարության հաղորդագրությունում:

««Արծիվ գործընկերը» կենսական հնարավորություն է մեր երկու երկրի զինվորների համար մարտավարական մակարդակում նոր հարաբերություններ կառուցելու եւ խաղաղապահ գործողությունների փոխգործունակությունը մեծացնելու համար: Այն նաեւ հիմնված է Հայաստանի հետ Կանզասի ազգային գվարդիայի 20-ամյա հարաբերությունների վրա»,- ասել է Եվրոպայում եւ Աֆրիկայում ԱՄՆ բանակի գնդապետ Մարտին Օ'Դոնելը:

Նշենք, որ Պաշտպանության նախարարության պետական գործընկերության ծրագրի շրջանակում Հայաստանի հետ Կանզասի ազգային գվարդիայի պետական գործընկերությունը սկիզբ է առել 2003 թվականից:

Զորավարժությունները ծրագրում են հայկական 12-րդ խաղաղապահ բրիգադին նախապատրաստել ՆԱՏՕ-ի գործառնական հնարավորությունների հայեցակարգի (OCC) գնահատմանը ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում այս տարվա վերջին:

Հիշեցնենք, որ «Միջազգային խաղաղապահ առաքելություններում մասնակցության նախապատրաստման շրջանակում սեպտեմբերի 11-20-ը Հայաստանում՝ ՊՆ խաղաղապահ բրիգադի «Զառ» ուսումնական կենտրոնում եւ ՊՆ N ուսումնական կենտրոնում, կանցկացվի «ԱՐԾԻՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ-2023» հայ-ամերիկյան համատեղ զորավարժությունը:

ՀՀ ՊՆ-ի հաղորդմամբ՝ զորավարժությունը ենթադրում է խաղաղապահ առաքելությունների ընթացքում հակամարտող կողմերի միջեւ կայունացման գործողություններ:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 8 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 14-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԿԱՐԵՎՈՐ

ՀԱՑԸ՝ ԿՏՐՈՆՈՎ

Արցախի սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարությունը «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացնում է, որ ս.թ. սեպտեմբերի 9-ին Ստեփանակերտ քաղաքում հացի վաճառքը կիրականացվի համար 5 կտրոնով:

Այն քաղաքացիները, որոնք չեն կարողացել օգտվել նախորդ օրերի համար նախատեսված համար 1, 2, 3 եւ 4 կտրոններից, կարող են այդ կտրոններով հացը գնել սեպտեմբերի 9-ին:

ԻՆՉՊԵ՞Ս ԿԸՆՏՐԵՆ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ Երեւանի ավագանու ընտրությունների անկախ մշտադիտարկում իրականացնող աշխատանքային խմբի անդամները հանդիպել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) քարտուղար Արմեն Սմբատյանի եւ իրավաբանական վարչության պետ Լիլիա Հակոբյանի հետ:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝հանդիպման ընթացքում իրականացվել է մի շարք հարցերի առնչությամբ քննարկում, ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչների կողմից ներկայացվել են նախորդ ընտրությունների ժամանակ արձանագրված եւ ներկայումս հավանական խնդիրները, նախանշվել են համագործակցության ուղղություններ:

Անդրադարձ է կատարվել հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի պատշաճ իրացմանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այս տարի շուրջ 180 ընտրատեղամաս մատչելի կամ մասամբ մատչելի է հաշմանդամություն ունեցող անձանց համար, բոլոր ընտրատեղամասերում առկա կլինեն բրայլյան կաղապարով քվեաթերթիկներ, որոնք հնարավորություն կտան տեսողության խնդիրներ ունեցող քաղաքացիներին քվեարկել անձամբ:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 17-ին կայանալիք Երեւանի ավագանու հերթական ընտրություններին ընտրական իրավունքների երաշխավորումն ու առավել արդյունավետ պաշտպանությունն ապահովելու նպատակով Պաշտպան Անահիտ Մանասյանի հանձնարարությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ: Այդ օրն աշխատակազմն աշխատելու է արտակարգ ռեժիմով՝ հետեւելով եւ արձագանքելով մարդու իրավունքների ենթադրյալ խախտումներին, ինչպես նաեւ դրանց առնչությամբ Պաշտպանի լիազորությունների շրջանակներում ձեռնարկելով անհրաժեշտ գործողություններ:

ԿՐԹԱԿԱՆ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է, որ հաստատվել են 2023 թվականի 3-րդ ֆենաշրջանի՝ դրսեկության ձեւով (էքստեռն) ավարտական ֆենությունների կազմակերպման եւ անցկացման աշխատակարգն ու ժամանակացույցը:

Ըստ այդմ՝ 2023 թվականի 3-րդ քննաշրջանի՝դրսեկության ձեւով (էքստեռն) քննությունները կանցկացվեն հոկտեմբերի 15-ից մինչեւ նոյեմբերի 15-ը ներառյալ:

Հիմնական կրթության վկայական ստանալու համար դրսեկները 2023 թ. 3-րդ քննաշրջանի ընթացքում «Հայաստանի աշխարհագրություն», «Աշխարհագրություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

«Հայոց եկեղեցու պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «ՆՁՊ եւ անվտանգ կենսագործունեություն», «Ռուսաց լեզու», «Ռուս գրականություն» (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար), «Օտար լեզու» («Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն», այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ), «Գրականություն» առարկաների քննությունները հանձնում են բանավոր: «Ֆիզկուլտուրա» առարկայից հանձնում են ստուգարք (նորմատիվների հանձնում):

Միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար դրսեկները 2023 թվականի 3-րդ քննաշրջանի ընթացքում «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

«Հայոց եկեղեցու պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «ՆՁՊ եւ անվտանգ կենսագործունեություն», «Օտար լեզու» («Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն», այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ, «Ռուսաց լեզու», «Ռուս գրականություն» (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար) առարկաների քննությունները հանձնում են բանավոր: «Ֆիզկուլտուրա» առարկայից հանձնում են ստուգարք (նորմատիվների հանձնում):

Նշենք, որ հիմնական կրթության վկայականում եւ միջնակարգ կրթության ատեստատում ավարտական եւ պետական ավարտական քննական առարկաները գնահատվում են 20 բալային համակարգով, իսկ տարեկան գնահատականները նշանակվում են՝ 20 բալային համակարգից գնահա-տա-կան-ները վերածելով 10 բալային համակարգի:

Գնահատականները գրանցելիս գնահատման 20 բալային համակարգից 10 բալային համակարգին անցման համապատասխանությունը կատարվում է համաձայն հետեւյալ սանդղակի՝

8-9 միավոր - 4
10-11 միավոր - 5
12-13 միավոր - 6
14-15 միավոր - 7
16-17 միավոր - 8
18-19 միավոր - 9
20 միավոր -10

Հավելենք, որ բանավոր քննությունները գնահատվում են 10 բալային համակարգով եւ համարվում տարեկան գնահատականներ:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ նաեւ, որ դրսեկության ձեւով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպելու եւ անցկացնելու գործընթացը վերահսկում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը:

ՆՇԱՆԱԿԱԼԻ

ՄԵԾ ԹԱՓՈՎ ԱԿՑԻԱՆԵՐ

«Վայլդբերիզ»-ի՝Հայաստանում գործունեություն ծավալելու դեմ տնտեսվարողները դեռ կշարունակեն իրենց բողոքի ակցիան: Ըստ իրենց՝ հարցին պետք է ճիշտ լուծում տրվի: Հայ տնտեսվարողների պահանջը հետեւյալն է. կամ «Վայլդբերիզ»-ը պետք է փակվի, կամ մաքսազերծման գներն այնպես սահմանեն, որ կարողանան հավասար մրցակցություն ապահովել:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում տնտեսվարող Արման Թումասյանը նշեց, որ 2 ամսում չեն կարող նոր մասնագիտություն սովորել, որն իրենց խորհուրդ է տվել էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը:

«Այս ամենը հետո կհանգեցնի արտագաղթի, քանի որ շատ տնտեսվարողներ մի քանի ամիս հետո արդեն խնդիրներ են ունենալու բանկերի եւ շատ այլ կառույցների հետ: Մեր խանութներում գիտե՞ք, թե ինչ է կատարվում. դպրոցական իրերը չեն կարողացել վաճառել, եւ ներկա պահին մարդիկ ստիպված վաճառում են կամ ինքնարժեքով, կամ այնպիսի զեղչերով, որ կարողանան գումար հավաքել ու փախնել»,- մեզ հետ զրույցում նշեց նա:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԲԵՆԶԱԼՑԱԿԱՅԱՆԸ ՓԱԿՎԵՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկություններով՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարագրի հիման վրա՝հրդեհային անվտանգության մասնագետները հրդեհատեխնիկական հետազոտություն են իրականացրել Երեւանի Կենտրոն վարչական շրջանի Մ. Հերացու 2/5 հասցեում «Սի Փի Էս Էներջի գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից շահագործվող բենզալցակայանի՝ նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների նկատմամբ:

Հետազոտության արդյունքում հայտնաբերվել եւ արձանագրվել են հրդեհային եւ տեխնիկական անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների այնպիսի խախտումներ, որոնք անմիջական սպառնալիք են մարդկանց կյանքի, առողջության եւ անվտանգության համար:

Նշենք, որ հաշվի առնելով հրդեհային եւ տեխնիկական անվտանգության պահանջների խախտումների ռիսկայնությունն ու վտանգավորության աստիճանը՝ ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմնի ղեկավարի կողմից նշյալ բենզալցակայանի շահագործումը դադարեցնելու որոշում է կայացվել:

Հավելենք, որ սեպտեմբերի 8-ին տեսչական մարմնի, Երեւանի քաղաքապետարանի եւ Ներքին գործերի նախարարության համատեղ իրականացրած միջոցառման արդյունքում նշված բենզալցակայանի գործունեությունը փաստացի դադարեցվեց, եւ այն ապամոնտաժվեց:

Բենզալցակայանը շահագործող ընկերության առջեւ պահեստարաններում առկա վառելիքն ամբողջությամբ դատարկելու եւ չեզոքացնելու պահանջ է դրվել:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՇՈՈՒ ԲԻԶՆԵՍ

ԱՐՍԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆՆ ՈՒ ԾՆՆԴԱՎԱՅՐԸ

«Կամիլի բնավորությանը տեղյակ լինելով՝ կարող եմ ասել, որ հնարավոր է եւ հեռ գա մի օր»:

Արսեն Գրիգորյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում պատմել է տարօրինակ սովորությունների, ոտքի վնասվածքի, Հայաստան-Արցախ-Սփյուռք կապի, նոր նախագծերի մասին:

-Չէի կարող զրույցը չսկսել ինձ եւ Ձեզ համար հոգեհարազատ վայրից՝ Վարդենիկից, որը երկուսիս ծննդավայրն է: Տարիներ առաջ տանը ծնվելը նորմալ էր, բայց Ձեր դեպքում դա արարողակարգի է վերածվել: Ի՞նչպես է դա տեղի ունեցել:

-Երրորդ դեմքով պատմեմ. մեծ մայրիկիս պատմելով (քանի որ ինքը շատ տպավորիչ էր պատմում ամեն ինչ)՝ տանը եղել են մայրս, մեծ մայրիկս, քույրերս, եղբայրս: Կարելի է կես կատակ-կես լուրջ ասել, որ բարեկամական ինչ-որ կազմ եղել է այդուամենայնիվ, եւ այդ ձայներից վախեցած քույրերս ու եղբայրներս կուչ են եկել սենյակի մի անկյունում՝ անկողնու տակ՝ փոքր ինչ վախեցած, թե ինչ է կատարվում: Եկել է բուժքույրը՝ տատմերը, ում, ի դեպ, այսօր ճանաչում եմ. շատ երիտասարդ, հաճելի կին է: Նրա հետ ծանոթացրել եմ ավելի գիտակից տարիքում՝ ասելով, որ ինքն է ընդունել իմ ծնունդը: Եվ այդպես հայտնվել եմ այս աշխարհում, ինչի համար որ ուրախ եմ:

Բայց մի անգամ տարիներ առաջ, երբ Ֆրեզնոյում հարցազրույց էի տալիս մեր հայկական մամուլին ու շատ սովորական պատմեցի, որ տանն եմ ծնվել, իրենք դա վերնագիր էին դրել: Հետո ես ուսումնասիրեցի, եւ պարզվեց, որ այսօր աշխարհում ամենաթանկ ծնունդները տանը ընդունված ծնունդներն են:

-Հետաքրքիրն այն է, որ Դուք պատմում եք Ձեր քույրերի, եղբայրների մասին: Դուք 4-րդ՝ վերջին երեխան եք, եւ չորսդ էլ ծնվել եք Վարդենիկում, երբ ապրելիս եք եղել Երեւանում: Դուք հիմա երեւանցի՞ եք, թե՞ վարդենիկցի:

-Ես ինձ երեւանցի եմ համարում, որովհետեւ ես Երեւանի հետ եմ կապված, եւ Երեւանի հետ է կապված իմ կյանքի ամեն դրվագ, բայց, բնականաբար, ես նաեւ վարդենիկցի եմ: Ես վարդենիկցի եմ ոչ միայն նրա համար, որ այնտեղ եմ ծնվել, այլ նրա համար, որ իմ արմատները այնտեղից են գալիս՝ իմ ծնողները, տատիկ-պապիկներս եւ այլն: Ես վարդենիկցի եմ, ինչի համար շատ ուրախ եմ:

-Վերջին անգամ ե՞րբ եք եղել Վարդենիկում:

-Անցած տարի՝ օգոստոսին:

-Այս տարի ինչու՞ չգնացիք:

-Երեւանում էի, կարծես ինչ-որ գործեր կային, բայց էլի գնալու եմ անպայման մոտ օրերս:

-Առաջ անցնելով՝ խոսենք Ձեր՝ 15-16 տարեկանից մենակ ապրելու մասին: Ինչ-որ պահից սկսած՝ չմեղադրեցի՞ք Ձեր ծնողներին մենակ թողնելու համար:

-Ոչ, ես շատ ճիշտ եմ համարում այն, որ մենակ եմ մնացել: Բացարձակ մեղադրելու ոչինչ չունեմ: Ասեմ ավելին՝ շատ շնորհակալ եմ ծնողներիս դրա համար, որովհետեւ 15-ից երբ սկսեցի մենակ մնալ, իրենց հոգատարությունը եւս շարունակում էր ինձ հետ լինել:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Զրուցեց ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԸ

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ԵՐԳՉՈՒՀԻՆ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է ⇨

Երգչուհի, դերասանուհի Դալիթան օրերս ինստագրամյան «Սթորի» բաժնում հրապարակում էր արել՝ տեղադրելով հիվանդանոցից լուսանկար: Դալիթան կից ոչինչ չէր նշել, ինչն անհանգստացրել էր նրա հետեւորդներին: Այսօր երգչուհին հայտնել է, որ իրեն լավ է զգում, սակայն չի բացահայտել հիվանդանոցում հայտնվելու պատճառը. «Սիրելի՛ մարդիկ, արդեն ինձ ավելի լավ եմ զգում: Շնորհակալ եմ բոլորիդ ուշադրության ու հոգատարության համար»,-գրել է նա:

Հավելենք, որ այս շրջանում Դալիթան նկարահանվում է «Շանթ» հեռուստաընկերության «Իրար դեմ» սերիալում:

ՈՎՔԵ՞Ր ԿՄԱՍՆԱԿՑԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի են դարձել հունահռոմեական եւ ազատ ոճի ըմբշամարտի Հայաստանի հավաքականների կազմերը Բելգրադում կայանալիք աշխարհի առաջնությունում:

Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիան տեղեկացնում է, որ ԱԱ-ին կմասնակցի աշխարհի ու Եվրոպայի չեմպիոն 35-ամյա Մաքսիմ Մանուկյանը, որը երկու տարի անց՝ մրցագորգ վերադառնալուց հետո, մայիսին հաղթել էր Բենուր Փաշայանի անվան հուշամրցաշարում:

Հունահռոմեական ոճի ըմբշամարտի Հայաստանի հավաքականը մրցավայր կմեկնի ամբողջական կազմով՝ Ռուդիկ Մկրտչյան (55 կգ), Գեւորգ Ղարիբյան (60 կգ), Հրաչյա Պողոսյան (63 կգ), Սլավիկ Գալստյան (67 կգ), Շանթ Խաչատրյան (72 կգ), Մալխաս Ամոյան (77 կգ), Մաքսիմ Մանուկյան (82 կգ), Գեւորգ Թադեւոսյան (87 կգ), Արթուր Ալեքսանյան (97 կգ) եւ Դավիթ Օվասապյան (130 կգ):

Նշենք, որ ազատ ոճի ըմբշամարտի Հայաստանի հավաքականի կազմում ընդգրկվել է 7 ըմբիշ՝ Արսեն Հարությունյան (57 կգ), Նորիկ Հարությունյան (61 կգ), Վազգեն Թեւանյան (65 կգ), Արման Անդրեասյան (70 կգ), Հրայր Ալիխանյան (74 կգ), Արման Ավագյան (79 կգ) եւ Սերգեյ Սարգսյան (97 կգ):

Հավելենք, որ Բելգրադն աշխարհի առաջնությունը կընդունի սեպտեմբերի 16-ից 24-ը: ԱԱ-ն վարկանիշային է լինելու «Փարիզ-2024» օլիմպիական խաղերի համար: Յուրաքանչյուր օլիմպիական քաշային կարգում խաղարկվելու է 5 ուղեգիր: Ուղեգիր կնվաճեն 4 մեդալակիրները, ինչպես նաեւ բրոնզե մեդալի համար գոտեմարտում պարտված 2 ըմբիշների միջեւ լրացուցիչ գոտեմարտի հաղթողը:

ՍՊՈՐՏ

ՆՈՐ ՄԵԴԱԼ

Սաուդյան Արաբիայում ընթացող ծանրամարտի աշխարհի առաջնությունում Եվրոպայի չեմպիոն 20-ամյա Գոռ Սահակյանը դարձավ բրոնզե մեդալակիր:

«Ժողովուրդ» օրաթերթը ծանրամարտի միջազգային ֆեդերացիայի պաշտոնական կայքից տեղեկանում է, որ Սահակյանը երկամարտում գրանցել է 312 կգ արդյունք: «Պոկում» վարժությունում նա 3-րդ փորձից բարձրացրել է 142կգ ծանրաձողը՝ նվաճելով փոքր արծաթե մեդալ: «Հրում» վարժությունում նա կրկին 3-րդ փորձից կարողացավ բարձրացնել 170կգ ծանրաձողը:

Սա Հայաստանի առաջին մեդալն է ծանրամարտի աշխարհի ընթացիկ առաջնությունում:

ՀԱՋՈՂ ՄԵԿՆԱՐԿ

Սեպտեմբերի 7-ին Նիդերլանդների Հաագա քաղաքում մեկնարկեց երիտասարդների Եվրոպայի առաջնության մրցաշարը:

«Ժողովուրդ» օրաթերթին Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիայից տեղեկացնում են, որ մրցումների հենց առաջին օրը 60 կգ քաշային կարգում հանդես եկող, Գյումրու ՄՀԿ համալիր մանկապատանեկան մարզադպրոցի սան Աշիկ Անդրեյանը /մարզիչ՝ Նարեկ Սուքիասյան/, տանելով չորս հաղթանակ, գրավեց 3-րդ մրցանակային տեղը եւ նվաճեց բրոնզե մեդալ:

ՄԵՍՍԻՆ՝ ԽԱՂԻ ՄԱՍԻՆ

Աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի եւ ամերիկյան «Ինտերի Մայամիի» 36-ամյա հարձակվող Լիոնել Մեսին մեկնաբանել է հաղթական մեկնարկը 2026թ. աշխարհի առաջնության ընտրական փուլում:

Լիոնել Սկալոնիի գլխավորած թիմը 1:0 հաշվով պարտության էր մատնել Էկվադորի հավաքականին Մեսիի գոլի շնորհիվ:

«Գիտենք, որ մեզ բարդ հանդիպումներ են սպասվում որակավորման փուլում: Էկվադորի հավաքականն ունի շատ լավ խաղացողներ, եւ նրանք գիտեն՝ ինչպես խաղալ: Նրանք ֆիզիկապես շատ լավ են պատրաստված:

Շատ ծանր խաղ էր: Մի փոքր հոգնել եմ, բայց ինձ լավ եմ զգում:

Մենք մի քանի ամիս առաջ ենք դարձել աշխարհի չեմպիոն, բայց պետք է շարունակենք պայքարը եւ պատրաստվենք ԱԱ-2026-ին: Բոլորն են ցանկանում հաղթել Արգենտինայի հավաքականին»,- Մեսիի խոսքը մեջբերում է Արգենտինայի հավաքականի մամուլի ծառայությունը:

Հաջորդ հանդիպումն Արգենտինայի հավաքականը կանցկացնի սեպտեմբերի 12-ին՝ հյուրընկալվելով Բոլիվիային:

● *Սեպտեմբերի 10-ին «Մեցցո» ակումբում տեղի կունենա Another Story Band-ի համերգը: Տոմսերի արժեքը՝ 4000 դրամ: Սկիզբը՝ ժամը 21:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինձ նշանակել են գլյուկոզայի տոլերանտության հետազոտություն: Ի՞նչ է դա նշանակում:

Արաքսյա Մելքոնյան (54 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գլյուկոզայի տոլերանտության հետազոտությունն իրականացվում է, երբ հիվանդը գանգատներ չունի, սակայն արյան քննությամբ գլյուկոզայի մակարդակը 6,9 մմոլ/լից բարձր է, կամ երբ հիվանդը գեր է, ճարպակալած, գանգատ չունի, մեզի մեջ գլյուկոզա չկա, բայց ինչ-որ բան կասկածվում է:

Հիվանդին տրվում է գլյուկոզայով ծանրաբեռնում. առաջարկում են 75 գրամ գլյուկոզա խմելու ձեւով, եւ 2 ժամ հետո կատարվում է արյան մեջ գլյուկոզայի քանակի որոշում: Եթե այդ ժամանակ գլյուկոզայի քանակը չի գերազանցում 7,8 մմոլ/լ-ը, համարվում է, որ պացիենտն առողջ է: Եթե այն 7,8 -11մմոլ/լ է, համարվում է, որ կա գլյուկոզայի տոլերանտության խանգարում, այսինքն՝ նախադիաբետիկ փուլն է: Իսկ եթե 11 մմոլ/լ -ից ավելի է, արդեն ախտորոշվում է շաքարային դիաբետ:

Իզմիրլյան բժշկական կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հղիների մոտ մոտեցումն այլ է. քաղցած վիճակում գլյուկոզան արյան մեջ չպետք է գերազանցի 5,1 մմոլ/լ-ը, եւ նրանց մոտ ծանրաբեռնվածության փորձի ժամանակ պետք չէ ռիսկի դիմել. հղիներին խմեցնում են 50 գրամ գլյուկոզա եւ ստուգում են արյունը 1 ժամ հետո: Նորմայում գլյուկոզան չպետք է գերազանցի 10 մմոլ/լ-ը, եթե դրանից ավելի է, եւ եթե 2 ժամից հետո էլ 8,5 մմոլ/լ է կամ ավելի, արդեն շաքարային դիաբետ է ախտորոշվում:

ՎԻԶԱ

ՀԱՐՑ. Ուզում եմ Չեխիա գնալ. որտե՞ղ ներկայացնեմ դիմում շենգենյան վիզա ստանալու համար:

Արմինե Մանուկյան (23 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Դիմորդները ներկայացնում են իրենց դիմումները Շենգենյան համաձայնագրի տարածքի այն երկրի դիվանագիտական ներկայացուցչությանը, որը հանդիսանում է հիմնական այցելության վայրը: Շենգենյան համաձայնագրի տարածքի մի քանի երկրներ այցելելու դեպքում հիմնական այցելության վայր է համարվում այն երկիրը, որտեղ այցելության ժամանակահատվածը ավելի երկար է: Եթե Շենգենյան համաձայնագրի տարածքի մի քանի երկրներ այցելելու ժամկահատվածները հավասար են, ապա հիմնական այցելության վայրը համարվում է այն երկիրը, որտեղ գտնվում է այցելության հիմնական նպատակը, օրինակ՝ համաժողովի մասնակցություն: Եթե հնարավոր չէ սահմանել այցելության հիմնական վայրը վերոնշյալ կերպով, ապա դիմումը ներկայացվում է Շենգենյան տարածքի այն երկրի դիվանագիտական ներկայացուցչություն, որը մուտք է գործում Շենգենյան տարածք, այսինքն՝ որը կայցելվի առաջինը:

Չեխիայի Հանրապետության դեսպանատուն Երեւանում

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե Չեխիայի Հանրապետությունը միակ հիմնական այցելության վայրն է, ապա դիմումը պետք է ներկայացվի Չեխիայի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Աբովյան 22ա հասցեում, 2-3 շաբաթ է, բակը քանդված վիճակում է: Սկզբում 2 շաբաթից ավել ջուր չկար, հետո ջրի ավելորդ կորստի պատճառով քանդեցին բակը ծայրից ծայր, փոխեցին խողովակները եւ թողեցին այս վիճակում: Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Ղուկասյանը եկավ, շրջեց, ըստ իրեն, ծանոթացավ աշխատանքներին: «Ժողովուրդ» օրաթերթը, բաց չթողնելով հնարավորությունը, փորձեց Ղուկասյանից ճշտել մի քանի հարցերի պատասխաններ, սակայն նա խուսափեց որեւէ պատասխան տալ: Հենց այդ օրվանից հետո դադարեցվեցին աշխատանքները: «Վիոլիա ջուր»-ը անհետ կորել է, իսկ մինչ այդ նոր մեքենաներով ջանասիրաբար փորվում էր նոր արված ասֆալտը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	+ 8 + 11 +21 + 25
Կոտայքի լեռներ	+ 8 + 11 +23 + 26
Կոտայքի նախալեռներ	+18 + 21 +27 + 30
Գեղարքունիք	+ 8 + 12 +20 + 24
Լոռի	+12 + 16 +18 + 24
Տավուշ	+14 + 19 +24 + 27
Արագածոտնի լեռներ	+ 9 + 12 +22 + 26
Արագածոտնի նախալեռներ	+18 + 20 + 30 + 33
Արարատ	+17 + 20 +34 + 36
Արմավիր	+15 + 19 +33 + 35
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 12 +24 + 25
Վայոց ձորի նախալեռներ	+16 + 19 +33 + 36
Սյունիքի հովիտներ	+18 + 21 +27 + 31
Սյունիքի նախալեռներ	+10 + 13 +19 + 22
ԼՂՀ	+17 + 20 +26 + 31
Երեւան	+19 + 21 +35 + 37

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **8.9.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*